



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

ՀՀ, Երևան 0095, Մ. Բաղրամյան պող. 19

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ա.ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրզոյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածով Ձեզ եմ ներկայացնում Արարատի և Արմավիրի մարզերում ԷԵԲՊՆ Ջրային կոմիտեյի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների և ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի Ջրային տնտեսության ԾԻԳ-ի գործունեությունը, հիմնավորվածությունը և առկա խնդիրները քննության առարկա դարձնելու նպատակով ԱԺ Քննիչ հանձնաժողով ստեղծելու մասին ներքոստորագրյալ պատգամավորների դիմումը, հաշվի առնելով, որ տվյալ մարզերում գյուղացիական համայնքները ավելի քան 10-15 տարի է, ինչ բարձրաձայնում են ոլորտում առկա խնդիրների և դրանց չլուծման մասին, իսկ տվյալ ոլորտում առկա խնդիրները լուրջ վնաս են հացնում ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացման և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման համար: Սույն հիմնախնդիրների ուսումնասիրությունը ունի կարևորագույն դեր ՀՀ տնտեսության համար, քանզի ըստ ԱՎԾ հրապարակած տվյալների 2017-2018թթ գյուղատնտեսության ոլորտը ապահովել է ՀՀ ՀՆԱ-ի համապատասխանաբար 14.7% և 13.7%-ը: Հետևաբար այս ոլորտի կարգավորման խնդիրը հրամայական է ջրօգտագործողների խնդիրների լուծման և առհասարակ ՀՀ տնտեսության կայուն աճը ապահովելու համար:

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Որպես քննիչ հանձնաժողովի քննության առարկա նախատեսվում է Արարատի և Արմավիրի մարզերում ԷԵԲՊՆ Ջրային կոմիտեյի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների և ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի Ջրային տնտեսության ԾԻԳ-ի գործունեությունը, հիմնավորվածությունը և առկա խնդիրները:









ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆ Է

Որպես քննիչ հանձնաժողովի իրավասության ոլորտ նախատեսվում է քննության Արարատի և Արմավիրի մարզերում ԷԵԲՊՆ Ջրային կոմիտեյի, դրա կառուցվածքային ստորաբաժանումների և ՀՀ ԷԵԲՊՆ Ջրային տնտեսության պետական կոմիտեի Ջրային տնտեսության ԾԻԳ-ի գործունեության նկատմամբ վերահսկողությունը:

Որպես քննիչ հանձնաժողովի նախագահ է առաջարկվում ՀՀ ԱԺ պատգամավոր Ծովինար Վարդանյանը:

Քննիչ հանձնաժողովի լիազորությունների ժամկետը սահմանել քննիչ հանձնաժողովի ստեղծման պահից սկսած 6 ամիս:

Քննիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանել տասնվեց:
Քննիչ հանձնաժողովի կազմը սահմանել հետևյալ համամասնությամբ՝
«Իմ Քայլը» խմբակցություն-11 անդամ
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն-3 անդամ
«Լուսավոր Հայաստան» խմբակցություն-2 անդամ

- 1) Մկերտ Վազունյան  052
- 2) Կապույտ Վիճառյան  060
- 3) Վահե Կարամանյան  078
- 4) Յրգար Կասեղյան  032
- 5) Արթուր Շախչյան  082
- 6) Վրթակ Կարապետյան  084
- 7) Ջիոզ Բարսեղյան  057
- 8) Ջուրջան Մարտիրոսյան  059

- 26) Ulysses Ulysses 035 Ulysses
- 27) Ulysses Ulysses 039 Ulysses
- 28) Ulysses Ulysses 063
- 29) Ulysses Ulysses 034
- 30) Ulysses Ulysses 012
- 31) Ulysses Ulysses 065
- 32) Ulysses Ulysses 031
- 33) Ulysses Ulysses 023
- 34) Ulysses Ulysses 064
- 35) Ulysses Ulysses 049
- 36) Ulysses Ulysses 008
- 37) Ulysses Ulysses 053
- 38) Ulysses Ulysses 033
- 39) Ulysses Ulysses 066
- 40) Ulysses Ulysses 038